ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա-6

ք. Երևան «12» հոկտեմբեր 2019թ.

Ջրային կոմիտեն, ի դեմս Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ս. Ջատիկյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Թադևոսյան որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված՝ ստորգետնյա խորքային հորի հորատման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ նախագծային փաստաթղթերին համապատասխան՝ Զարթոնք N2 համայնքի խորքային հորի հորատման աշխատանքների և Զարթոնք N3 համայնքի խորքային հորի հորատման աշխատանքների համար՝ 38 օր, Մրգաշատ համայնքի խորքային հորի հորատման աշխատանքների համար՝ 40 օր.

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ գնել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 5 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 72 635 580 (յոթանասուներկու միլիոն վեց հարյուր երեսունհինգ հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 12 105 930 (տասներկու միլիոն մեկ հարյուր հինգ հազար ինը հարյուր երեսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 22 140 000 (քսաներկու միլիոն մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ, որից 3 690 000 (երեք միլիոն վեց հարյուր իննսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

2-րդ չափաբաժին՝ 24 025 140 (քսանչորս միլիոն քսանհինգ հազար մեկ հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 4 004 190 (չորս միլիոն չորս հազար մեկ հարյուր իննսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

8-րդ չափաբաժին՝ 26 470 440 (քսանվեց միլիոն չորս հարյուր յոթանասուն հազար չորս հարյուր քառասուն) ՀՀ դրամ, որից 4 411 740 (չորս միլիոն չորս հարյուր տասնմեկ հազար յոթ հարյուր քառասուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxՇԳՏxՇ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է[1],

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է,

ՇԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է,

Շ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է,

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, բաղաբական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն

---

[1] *Եթե պայմանագրում ներառված են 1-ից ավելի չափաբաժիններով ներկայացված գնման առարկաներ, ապա ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված՝ համապատասխան չափաբաժնի գինն է:*

պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները սրան պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 18 /տասնութ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1,N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	<<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ադմ. Իսակովի 5/1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հեռ. +37410 505001
Հ/Հ	Հ/Հ 11500832749227
ՀՎՀՀ 02555816	ՀՎՀՀ 90039583
	էլ. փոստ՝ mgroupenergoservice@mail.ru
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար	տնօրեն
Ա. ՉԱՏԻԿՅԱՆ	Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 1
«12» հունիսի 2019թ. կնքված
ՁԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա-6 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ ՀՈՐԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժին 1

Զարթոնք համայնքի N2 խորքային հորի հորատում

ԲԱԺԻՆ I

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	1. Հորատման և հիդրոտեխնիկական աշխատանքներ				
1	Հորատանցքի հորատում Φ490մմ III կարգի գրունտներում	մ	3.0	15.40	46.20
2	Հորատանցքի հորատում Φ490մմ V կարգի գրունտներում	մ	42.0	35.93	1509.16
3	Հորատանցքի հորատում Φ490մմ VII կարգի գրունտներում	մ	45.0	63.16	2842.09
4	Հորատանցքի ամրակապում Φ324x8,5 պողպատե խողովակով	մ	22.0	51.55	1134.09
5	Քամիչ կլանիչ TP8F2B Φ324x8,5	մ	68.0	59.36	4036.36
6	Արտախողովակային տարածության ցեմենտացում L=10,0մ, կավապատում L=0,50մ	սյուն	1	225.10	225.10
7	Ցեմենտի ծախսը	տ	0.20	57.08	11.42
8	Ջրի ծախսը	$մ^3$	0.10	0.21	0.02
9	Կավախծուծում	$մ^3$	0.03	4.11	0.13
10	Արտախողովակային տարածության լցնում մանրախճով	$մ^3$	3.00	16.86	50.57
11	Ուղղորդիչ լապտերներ, մոնտաժումով	կգ	30.0	0.64	19.27
12	Պոմպ ЭЦВ4-12-250-35 37Կվտ	կ-տ	1	1819.66	1819.66
13	Ջրհան խողովակ 159x6	մ	30.0	17.81	534.45
14	Պոլիէթիլենային պիեզոմետրիկ խողովակ Φ25մմ ստորգետնյա մոնտաժումով	մ	30.0	0.41	12.25
15	Պողպատե խողովակ DN159x6	մ	6.0	17.81	106.89
16	Պողպատե խողովակ DN219x4	մ	0.2	15.60	3.12
17	Կցաշուրթ Կց-1 Pպ=1,0Մպա Dպ=150մմ,մոնտաժումով	հատ	15	10.20	152.98
18	Մանոմետր PN=1,0ՄՊա	հատ	1	8.32	8.32
19	Փական DN150 PN=1,0ՄՊա	հատ	1	157.61	157.61
20	Պողպատե խողովակի ձևավոր մասեր	կգ	10.0	1.68	16.80
21	Պողպատե թիթեղ, հեղյուս, մանեկ, ամրան	կգ	75.7	1.68	127.16
22	Բետոն B15 դասի	$մ^3$	1.4	42.56	59.58
23	Խիճ	$մ^3$	0.2	14.68	2.94
24	Հորափողի լվացում ջրով	օր	1.0	343.99	343.99
25	Ջրի փորձնական արտամղում և նմուշառում	օր	3.0	343.99	1031.97
	2. Հորատանցքի հեռացնող խողովակաշար				
1	Տարածքի հարթեցում	$մ^2$	50.0	0.02	0.75
2	Գրունտի մշակում III կարգի բնահողում	$մ^3$	5.8	0.54	3.13
3	Խրամուղու մշակում III կարգի բնահողում ձեռքով	$մ^3$	1.0	2.55	2.55
4	Նախապատրաստական շերտ տեղի փափուկ գրունտներից	$մ^3$	0.4	1.10	0.44
5	Հեռացնող պողպատե խողովակի մոնտաժում DN159x4,5 փորձարկումով	մ	11.0	10.14	111.57
6	Հեռացնող պողպատե խողովակի DN159x4,5 հիդրոմեկուսացում	մ	11.0	0.82	9.03
7	Պողպատե խողովակի ձևավոր մասեր ծունկ, DN150-	կգ	39.0	1.68	65.51

	3հատ				
8	Պաշտպանիչ շերտ տեղի փափուկ գրունտներից	մ^3	1.6	1.10	1.76
9	Ետլիցքի իրականացում տեղական փափուկ բնահողերից	մ^3	4.0	0.05	0.20
	3. Խորքային հորի տարածքի ցանկապատ				
1	Ժապավենային խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում,կողալիցքով	մ^3	2.5	2.62	6.56
2	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում, ձեռքով	մ^3	2.5	1.10	2.74
3	Խճի տուփանում գրունտի մեջ	մ^2	37.0	0.34	12.65
4	Կոպճային շերտի իրականացում	մ^3	3.70	6.55	24.24
5	Խարամի շերտի իրականացում	մ^3	1.80	6.21	11.18
6	Ժապավենային հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.24	55.35	68.64
7	Եզրաշերտի բետոնի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.00	67.03	67.03
8	Կանգնակների հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.06	55.35	58.67
9	Մետաղական ցանցավոր ցանկապատի իրականացում	տ	0.42	68.46	29.03
10	Մետաղական խողովակի Ф57x3, արժեքը	մ	110.0	2.19	241.12
11	Մետաղական անկյունակի L45x4, արժեքը	մ	39.7	1.64	65.27
12	Ցանկապատի մետաղական ցանցի N50-2,5 արժեքը	մ^2	36.4	0.96	34.91
13	Մետաղական ներդիր տարրեր	տ	0.075	300.49	22.51
14	Ծխնի	հատ	2	0.68	1.37
15	Կողպեք	հատ	1	6.85	6.85
16	Մետաղական ցանկապատի յուղաներկում, դարպասի, դռնակի հետ միասին	մ^2	40.0	1.31	52.36
	4. Խորքային հորի էլեկտրամատակարարում				
1	Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման ԼՏԵ-100/6 6/ 0.4կՎ, 100 կՎԱ ա) 10կՎ -ի մուտքի սարքավորումը) ուժային տրանսֆորմատոր ТМ-100/6, 10/0.4 կՎ, 600կՎԱ գ) 0.4 կՎ-ի բաշխիչ սարքավորումդ) բաժանիչ РЛНДА-6/250, ПРНի-6М շարժաբերով ե) ավտոմատ անջատիչ 160Ա հոսանքիզ) հաշվիչ էլեկտրոնային եռաֆազ 380Վ, 5Ա,հոսանքի տրանսֆորմատորներով ТК- 20, 200/5Ա (3հատ)է) մետաղական արկղ հաշվիչի տեղադրման համար	լրակ.	1	2322.69	2322.69
2	Անկյունային պողպատ	տ	0.098	300.49	29.35
3	Բետոնի նախապատրաստական շերտ B7,5 դասի	մ^3	0.560	38.10	21.34
4	Բետոն B12,5 W4 F150 դասի	մ^3	0.31	68.04	21.09
5	Ե/ն միաձույլ սալ -1 հատ	մ^3	0.17	184.74	31.41
6	Փոսորակի փորում III կարգի գրունտներում,կողալիցքով	մ^3	1.2	2.62	3.15
7	Շերտավոր պողպատ 40x4/25x4 տեղադրումով	մ	30.0	0.90	26.91
8	Պողպատ անկյունային 50x50x5մմ, L=2.5մ տեղադրումով	հատ	6	8.00	48.03
9	Խրամուղու փորում III կարգի գրունտներում	մ^3	9.0	0.54	4.86
10	Հակադարձ լտլիցք	մ^3	9.1	0.05	0.46
11	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ^3	1.1	0.05	0.06
12	Շերտավոր պողպատ 25x4 տեղադրումով	մ	6.0	0.90	5.38
13	Ղեկավարման կայան САУ-100	լրակ.	1	355.04	355.04
14	Հաղորդալար մեկուսացված հատվածքը 25մմ^2 ВПВ-25	մ	132.0	1.25	165.28
15	Պոլիվինիքլորիդե խողովակ Ф50 PVC	մ	6.0	0.70	4.22
	Ընդամենը				18191.5
	Այդ թվում սարքավորումներ				3550.0
	Շահույթ - 11%				1610.6
	Ընդամենը				19802.0
	Չնախատեսված ծախսեր - 3%				594.1
	Ընդամենը				20396.1
	ԱԱՀ- 20%				4079.2
	6ԿՎ լարման ցանցին միացնող սպառողների ստանդարտ միացման վճար				1061.0
	Ընդամենը				25536.3

Հավելված 2

Զարթոնք համայնքի N3 խորքային հորի հորատում

ԲԱԺԻՆ I

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	1. Հորատման և հիդրոտեխնիկական աշխատանքներ				
1	Հորատանցքի հորատում Φ490մմ III կարգի գրունտներում	մ	3.0	15.40	46.20
2	Հորատանցքի հորատում Φ490մմ V կարգի գրունտներում	մ	42.0	35.93	1509.16
3	Հորատանցքի հորատում Φ490մմ VII կարգի գրունտներում	մ	45.0	63.16	2842.09
4	Հորատանցքի ամրակապում Φ324x8,5 պողպատե խողովակով	մ	21.0	51.55	1082.54
5	Քամիչ կլանիչ TP8F2B Φ324x8,5	մ	69.0	59.36	4095.72
6	Արտախողովակային տարածության ցեմենտացում L=10,0մ, կավապատում L=0,50մ	սյուն	1	225.10	225.10
7	Ցեմենտի ծախսը	տ	0.20	57.08	11.42
8	Ջրի ծախսը	$մ^3$	0.10	0.21	0.02
9	Կավախծուծում	$մ^3$	0.03	4.11	0.13
10	Արտախողովակային տարածության լցնում մանրակոպիճով	$մ^3$	3.00	16.86	50.57
11	Ուղղորդիչ լապտերներ, մոնտաժումով	կգ	30.0	0.64	19.27
12	Պոմպ ЭЦВ4-12-250-35 37Կվտ	կ-տ	1	1819.66	1819.66
13	Ջրհան խողովակ 159x6	մ	30.0	17.81	534.45
14	Պոլիէթիլենային պիեզոմետրիկ խողովակ Φ25մմ ստորգետնյա մոնտաժումով	մ	30.0	0.41	12.25
15	Պողպատե խողովակ DN159x6	մ	3.0	17.81	53.44
16	Պողպատե խողովակ DN219x4	մ	0.3	15.60	4.68
17	Կցաշուրթ Կg-1 Pպ=1,0Մպա Dպ=150մմ,մոնտաժումով	հատ	21	10.20	214.17
18	Մանոմետր PN=1,0ՄՊա	հատ	1	8.32	8.32
19	Փական DN150 PN=1,0ՄՊա	հատ	3	157.61	472.83
20	Պողպատե խողովակի ձևավոր մասեր	կգ	10.0	1.68	16.80
21	Պողպատե թիթեղ, հեղուս, մանեկ, ամրան	կգ	75.7	1.68	127.16
22	Բետոն B15 դասի	$մ^3$	1.4	42.56	59.58
23	Խիճ	$մ^3$	0.2	14.68	2.94
24	Հորափորի լվացում ջրով	օր	1.0	343.99	343.99
25	Ջրի փորձնական արտամղում և նմուշառում	օր	3.0	343.99	1031.97
	2. Հորատանցքի հեռացնող խողովակաշար				
1	Տարածքի հարթեցում	$մ^2$	50.0	0.02	0.75
2	Գրունտի մշակում III կարգի բնահողում	$մ^3$	25.0	0.54	13.51
3	Խրամուղու մշակում III կարգի բնահողում ձեռքով	$մ^3$	4.4	2.55	11.24
4	Նախապատրաստական շերտ տեղի փափուկ գրունտներից	$մ^3$	1.8	1.10	1.98
5	Պողպատե պատյան խողովակ DN219x5	մ	17.0	15.60	265.26
6	Հեռացնող պողպատե խողովակի մոնտաժում DN159x4,5 փորձարկումով	մ	31.0	10.14	314.43
7	Հեռացնող պողպատե խողովակի DN159x4,5 հիդրոմեկուսացում	մ	31.0	0.82	25.44
8	Պողպատե խողովակի ձևավոր մասեր ծունկ, DN150-3հատ	կգ	39.0	1.68	65.51
9	Պաշտպանիչ շերտ տեղի փափուկ գրունտներից	$մ^3$	7.0	1.10	7.68
10	Եռլիցքի իրականացում տեղական փափուկ բնահողերից	$մ^3$	20.0	0.05	1.01

11	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ^3	0.6	0.05	0.03
	3. Խորքային հորի տարածքի ցանկապատ				
1	Ժապավենային խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում,կողալիցքով	մ^3	2.5	2.62	6.56
2	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում, ձեռքով	մ^3	2.5	1.10	2.74
3	Խճի տոփանում գրունտի մեջ	մ^2	37.0	0.34	12.65
4	Կոպճային շերտի իրականացում	մ^3	3.70	6.55	24.24
5	Խարամի շերտի իրականացում	մ^3	1.80	6.21	11.18
6	Ժապավենային հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.24	55.35	68.64
7	Եզրաշերտի բետոնի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.00	67.03	67.03
8	Կանգնակների հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.06	55.35	58.67
9	Մետաղական ցանցավոր ցանկապատի իրականացում	տ	0.42	68.46	29.03
10	Մետաղական խողովակի Φ57x3, արժեքը	մ	110.0	2.19	241.12
11	Մետաղական անկյունակի L45x4, արժեքը	մ	39.7	1.64	65.27
12	Ցանկապատի մետաղական ցանցի N50-2,5 արժեքը	մ^2	36.4	0.96	34.91
13	Մետաղական ներդիր տարրեր	տ	0.075	300.49	22.51
14	Ծխնի	հատ	2	0.68	1.37
15	Կողպեք	հատ	1	6.85	6.85
16	Մետաղական ցանկապատի յուղաներկում, դարպասի, դռնակի հետ միասին	մ^2	40.0	1.31	52.36
	4. Խորքային հորի էլեկտրամատակարարում				
1	Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման ԼՏԵ-100/6 6/ 0.4կՎ, 100 կՎԱ ա) 10կՎ -ի մուտքի սարքավորում բ) ուժային տրանսֆորմատոր ТМ-100/6, 10/0.4 կՎ, 600կՎԱ գ) 0.4 կՎ-ի բաշխիչ սարքավորում դ) բաժանիչ РЛНДА-6/250, ПРНի-6М շարժաբերով ե) ավտոմատ անջատիչ 160Ա հոսանքի զ) հաշվիչ էլեկտրոնային եռաֆազ 380Վ, 5Ա,հոսանքի տրանսֆորմատորներով ТК- 20, 200/5Ա (3հատ) է) մետաղական արկղ հաշվիչի տեղադրման համար	լրակ.	1.0	2322.69	2322.69
2	Անկյունային պողպատ	տ	0.1	300.49	29.35
3	Բետոնի նախապատրաստական շերտ B7,5 դասի	մ3	0.6	38.10	21.34
4	Բետոն B12,5 W4 F150 դասի	մ3	0	68.04	21.09
5	Ե/և միաձույլ սալ -1 հատ	մ3	0.2	184.74	31.41
6	Փոսորակի փորում III կարգի գրունտներում,կողալիցքով	մ3	1.2	2.62	3.15
7	Շերտավոր պողպատ 40x4/25x4 տեղադրումով	մ	30	0.90	26.91
8	Պողպատ անկյունային 50x50x5մմ, L=2.5մ տեղադրումով	հատ	6.00	8.00	48.03
9	Խրամուղու փորում III կարգի գրունտներում	մ3	9	0.54	4.86
10	Հակադարձ լտլիցք	մ3	9.1	0.05	0.46
11	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ3	1.1	0.05	0.06
12	Շերտավոր պողպատ 25x4 տեղադրումով	մ	6.0	0.90	5.38
13	Ղեկավարման կայան CAY-100	լրակ.	1.0	355.04	355.04
14	Հաղորդալար մեկուսացված հատվածքը 25մմ2 ВПВ-25	մ	132.0	1.25	165.28
15	Պոլիվինիքլորիդե խողովակ Φ50 PVC	մ	6	0.70	4.22
	Ընդամենը				19035.7
	Այդ թվում սարքավորումներ				3550.0
	Շահույթ - 11%				1703.4
	Ընդամենը				20739.1
	Չնախատեսված ծախսեր - 3%				622.2
	Ընդամենը				21361.3
	ԱԱՀ- 20%				4272.3
	6կՎ լարման ցանցին միացնող սպառողների ստանդարտ միացման վճար				1061.0
	Ընդամենը				26694.6

Գլուխ 8

Մրգաշատ համայնքի N1 խորքային հորի հորատում

ԲԱԺԻՆ I

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	1. Հորատման և հիդրոտեխնիկական աշխատանքներ				
1	Հորատանցքի հորատում Φ490մմ III կարգի գրունտներում	մ	4.0	15.40	61.60
2	Հորատանցքի հորատում Φ490մմ IV կարգի գրունտներում	մ	3.0	15.40	46.20
3	Հորատանցքի հորատում Φ490մմ V կարգի գրունտներում	մ	65.0	35.93	2335.61
4	Հորատանցքի հորատում Φ490մմ VII կարգի գրունտներում	մ	11.0	63.16	694.73
5	Հորատանցքի հորատում Φ490մմ VIII կարգի գրունտներում	մ	4.0	113.19	452.74
6	Հորատանցքի հորատում Φ490մմ X կարգի գրունտներում	մ	13.0	226.69	2946.91
7	Հորատանցքի ամրակապում Φ324x8,5 պողպատե խողովակով	մ	30.0	51.55	1546.48
8	Քամիչ կլանիչ TP8F2B Φ324x8,5	մ	70.0	59.36	4155.08
9	Արտախողովակային տարածության ցեմենտացում L=7,0մ,	սյուն	1	225.10	225.10
10	Ցեմենտի ծախսը	տ	0.17	57.08	9.70
11	Ջրի ծախսը	$մ^3$	0.07	0.21	0.01
12	Արտախողովակային տարածության լցնում մանրակոպիճով	$մ^3$	3.00	16.86	50.57
13	Ուղղորդիչ լապտերներ, մոնտաժումով	կգ	30.0	0.64	19.27
14	Պոմպ ЭЦВ4-12-250-35 37Կվտ	Կ-տ	1	1819.66	1819.66
15	Ջրհան խողովակ 159x6	մ	30.0	17.81	534.45
16	Պոլիէթիլենային պիեզոմետրիկ խողովակ Φ25մմ ստորգետնյա մոնտաժումով	մ	30.0	0.41	12.25
17	Պողպատե խողովակ DN159x6	մ	10.0	17.81	178.15
18	Պողպատե խողովակ DN219x4	մ	0.2	15.60	3.12
19	Կցաշուրթ Կg-1 Pպ=1,0Մպա Dպ=150մմ,մոնտաժումով	հատ	15	10.20	152.98
20	Մանոմետր PN=1,0ՄՊա	հատ	1	8.32	8.32
21	Փական DN150 PN=1,0ՄՊա	հատ	1	157.61	157.61
22	Պողպատե խողովակի ձևավոր մասեր	կգ	10.0	1.68	16.80
23	Պողպատե թիթեղ, հեղույս, մանեկ, ամրան	կգ	75.7	1.68	127.16
24	Բետոն B15 դասի	$մ^3$	1.4	42.56	59.58
25	Խիճ	$մ^3$	0.2	14.68	2.94
26	Հորափորի լվացում ջրով	օր	1.0	343.99	343.99
27	Ջրի փորձնական արտամղում և նմուշառում	օր	3.0	343.99	1031.97
	2. Հորատանցքի հեռացնող խողովակաշար				
1	Տարածքի հարթեցում	$մ^2$	50.0	0.02	0.75
2	Գրունտի մշակում III կարգի բնահողում	$մ^3$	8.6	0.54	4.65
3	Խրամուղու մշակում III կարգի բնահողում ձեռքով	$մ^3$	1.5	2.55	3.83
4	Նախապատրաստական շերտ տեղի փափուկ գրունտներից	$մ^3$	0.6	1.10	0.66
5	Պողպատե պատյան խողովակ DN219x5	մ	3.0	15.60	46.81
6	Հեռացնող պողպատե խողովակի մոնտաժում DN159x4,5 փորձարկումով	մ	14.0	10.14	142.00
7	Հեռացնող պողպատե խողովակի DN159x4,5 հիդրոմեկուսացում	մ	14.0	0.82	11.49
8	Պողպատե խողովակի ձևավոր մասեր ծունկ, DN150-3հատ	կգ	39.0	1.68	65.51
9	Պաշտպանիչ շերտ տեղի փափուկ գրունտներից	$մ^3$	2.4	1.10	2.63

10	Եռլիցքի իրականացում տեղական փափուկ բնահողերից	մ^3	7.6	0.05	0.38
11	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ^3	0.5	0.05	0.03
	3. Խորքային հորի տարածքի ցանկապատ				
1	Ժապավենային խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում,կողալիցքով	մ^3	2.5	2.62	6.56
2	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում, ձեռքով	մ^3	2.5	1.10	2.74
3	Խճի տուփանում գրունտի մեջ	մ^2	37.0	0.34	12.65
4	Կոպճային շերտի իրականացում	մ^3	3.70	6.55	24.24
5	Խարամի շերտի իրականացում	մ^3	1.80	6.21	11.18
6	Ժապավենային հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.24	55.35	68.64
7	Եզրաշերտի բետոնի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.00	67.03	67.03
8	Կանգնակների հիմքերի կառուցում B12,5 դասի բետոնով	մ^3	1.06	55.35	58.67
9	Մետաղական ցանցավոր ցանկապատի իրականացում	տ	0.42	68.46	29.03
10	Մետաղական խողովակի Φ57x3, արժեքը	մ	110.0	2.19	241.12
11	Մետաղական անկյունակի L45x4, արժեքը	մ	39.7	1.64	65.27
12	Ցանկապատի մետաղական ցանցի N50-2,5 արժեքը	մ^2	36.4	0.96	34.91
13	Մետաղական ներդիր տարրեր	տ	0.075	300.49	22.51
14	Ծխնի	հատ	2	0.68	1.37
15	Կողպեք	հատ	1	6.85	6.85
16	Մետաղական ցանկապատի յուղաներկում, դարպասի, դռնակի հետ միասին	մ^2	40.0	1.31	52.36
	4. Խորքային հորի էլեկտրամատակարարում				
1	Լրակազմ տրանսֆորմատորային ենթակայան արտաքին տեղադրման ԼՏԵ-100/10 10/ 0.4կՎ, 100 կՎԱ ա) 10կՎ -ի մուտքի սարքավորումք) ուժային տրանսֆորմատոր ТМ-100/10, 10/0.4 կՎ, 100կՎԱ գ) 0.4 կՎ-ի բաշխիչ սարքավորումդ) բաժանիչ РЛНДА-10/250, ПРНի-10М շարժաբերով ե) ավտոմատ անջատիչ 160Ա հոսանքիզ) հաշվիչ էլեկտրոնային եռաֆազ 380Վ, 5Ա,հոսանքի տրանսֆորմատորներով ТК- 20,200/5Ա (3հատ)է) մետաղական արկղ հաշվիչի տեղադրման համար	լրակ.	1	2322.69	2322.69
2	Անկյունային պողպատ	տ	0.098	300.49	29.35
3	Բետոնի նախապատրաստական շերտ B7,5 դասի	մ^3	0.560	38.10	21.34
4	Բետոն B12,5 W4 F150 դասի	մ^3	0.31	68.04	21.09
5	Ե/և միաձույլ սալ -1 հատ	մ^3	0.17	184.74	31.41
6	Փոսորակի փորում III կարգի գրունտներում,կողալիցքով	մ^3	1.2	2.62	3.15
7	Շերտավոր պողպատ 40x4/25x4 տեղադրումով	մ	30.0	0.90	26.91
8	Պողպատ անկյունային 50x50x5մմ, L=2.5մ տեղադրումով	հատ	6	8.00	48.03
9	Խրամուղու փորում III կարգի գրունտներում	մ^3	9.0	0.54	4.86
10	Հակադարձ լցլիցք	մ^3	9.1	0.05	0.46
11	Ավելցուկային գրունտի հարթեցում տեղում	մ^3	1.1	0.05	0.06
12	Շերտավոր պողպատ 25x4 տեղադրումով	մ	6.0	0.90	5.38
13	Ղեկավարման կայան САУ-100	լրակ.	1	355.04	355.04
14	Հաղորդալար մեկուսացված հատվածքը 25մմ^2 ВПВ-25	մ	132.0	1.25	165.28
15	Պոլիվինիլքլորիդե խողովակ Φ50 PVC	մ	6.0	0.70	4.22
	Ընդամենը				21016.1
	Այդ թվում սարքավորումներ				3550.0
	Շահույթ - 11%				1921.3
	Ընդամենը				22937.4
	Չնախատեսված ծախսեր - 3%				688.1
	Ընդամենը				23625.5
	ԱԱՀ- 20%				4725.1
	6կՎ լարման ցանցին միացնող սպառողների ստանդարտ միացման վճար				1061.0
	Ընդամենը				29411.6

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արմավիրի մարզի Զարթոնք, Մրգաշատ համայնքներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ ՀՎՀՀ 02555816	<<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ադմ. Իսակովի 5/1 հեռ. +37410 505001 Հ/Հ 11500832749227 ՀՎՀՀ 90039583 էլ. փոստ՝ mgroupenergoservice@mail.ru
Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար	տնօրեն
Ս. ՉԱՏԻԿՅԱՆ /ստորագրություն/ Կ.Տ.	Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ /ստորագրություն/

Հավելված թիվ 2
«12» [illegible] 2019թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա-6 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԽՈՐՔԱՅԻՆ ՀՈՐԵՐԻ ՀՈՐԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Չափաբաժնի համարը	Խորքային հորի անվանումը	Աշխատանքների կատարման վայրը	աշխատանքների կատարման սկիզբ	աշխատանքների կատարման ավարտ
1	գ. Զարթոնք N 2	ՀՀ Արմավիրի մարզ, Զարթոնք համայնք	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	38 օր
2	գ. Զարթոնք N 3	ՀՀ Արմավիրի մարզ, Զարթոնք համայնք	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	38 օր
8	գ. Մրգաշատ N 1	ՀՀ Արմավիրի մարզ, Մրգաշատ համայնք	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը	40 օր
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿԸ (ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ) ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Է ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816

Կոմիտեի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար

_____________ Ա. ՋԱՏԻԿՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ
Հասցե` ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ազմ. Իսակովի 5-1
հեռ. +37410 505001
Հ/Հ 11500832749227
ՀՎՀՀ 90039583
էլ. փոստ` mgroupenergoservice@mail.ru

տնօրեն

Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ _____________
/ստորագրություն/
Կ.Տ.

** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա [illegible] սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:

Հավելված N 3
«12» հոկտեմբեր 2019թ.կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա-6 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**									
			տարեկան	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45261148/516	ստորգետնյա հորատման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
2	45261148/517	ստորգետնյա հորատման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %
8	45261148/523	ստորգետնյա հորատման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

**Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ջրային կոմիտե
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02555816

Կոմիտեի գլխավոր քարտուղարի
պաշտոնակատար

Մ. ՋԱՏԻԿՅԱՆ
/ստորագրություն/

L.S.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ
Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Ադմ. Իսակովի 5/1
հեռ. +37410 505001
Հ/Հ 11500832749227
ՀՎՀՀ 90039583
էլ. փոստ՝ mgroupenergoservice@mail.ru

տնօրեն

Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
/ստորագրություն/

L.S.

Հավելված թիվ 4
«12» հոկտեմբեր 2019թ. կնքված
ՁԿ-ԳՀԱՇՀԲ-19/1-Ա-6 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

. ե . ե 2019 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ .____ե ._____ե 2019թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ . ե . ե 2019թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ պայմանագրի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
«12» մարտի 2019թ. կնքված
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա-6 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 2019թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 2019թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց	Ընդունեց հայտը նախագծած ներկայացուցիչ՝
_____ ազգանուն, անուն	_____ ազգանուն, անուն
_____ ստորագրություն	_____ ստորագրություն

Հավելված 5

«12» հոկտեմբեր 2019թ. կնքված

ՋԿ-ԳՀԱՇՁԲ-19/1-Ա-6 ծածկագրով պայմանագրի

Կառուցվածքների երաշխիքային սպասարկման ժամկետներ

1. Բետոնե կառուցվածքներ – 50 տարի:
2. Մետաղական տարրեր – 20 տարի:
3. Ճնշումայի խողովակաշար – 30 տարի:
4. Էլեկտրական սարքեր սարքավորումներ – առնվազն 5 տարի (տրված արտադրողի կողմից):
5. Պոմպ – առնվազն 5 տարի (տրված արտադրողի կողմից):

Ծանոթություն

*Երաշխիքային ժամկետները իրատեսական են շահագործման կանոնները պահպանելու դեպքում:

Կապալառու կազմակերպությունը 1 տարի երաշխիքային ժամկետներում պարտավոր է վերացնել թերությունները իր կողմից իրականացված աշխատանքների:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Ջրային կոմիտե	<<Մ-Գրուպ Էներգոսերվիս>> ՍՊԸ
ՀՀ ք. Երևան, Վարդանանց 13ա	Հասցե՝ ԼՂՀ, ք. Ստեփանակերտ, Աղմ. Իսակովի 5/1
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	հեռ. +37410 505001
Հ/Հ	Հ/Հ 11500832749227
ՀՎՀՀ 02555816	ՀՎՀՀ 90039583
	էլ. փոստ՝ mgroupenergoservice@mail.ru
Կոմիտեի գլխավոր բարտուղարի պաշտոնակատար	տնօրեն
Ա. ՉԱՏԻԿՅԱՆ	Տ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
/ստորագրություն/	
Կ.Տ.	Կ.Տ.